ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2024Թ. 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



DONATE

zinapah.am

Բովանդակություն

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը

Կառավարման մարմինը և գործադիր թիմը
Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
Գլխավոր գործադիր տնօրենի խոսքը
Գործառնությունները 2017 – 2024թթ.
Ծահառուները և վճարված հատուցումները 2024թ.
Նվիրատվությունները 2017 – 2024թթ.
Ծահառուներին միտված սոցիալական ծրագրեր և համագործակցություն
Զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2023թ. աուդիտորական հաշվետվություն

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆՎՈՐՈՒԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մարիանա Հարությունյան
Ծրագրերի ղեկավար

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Գնումների և դրոշմ. վճարների վերադարձի համակարգող

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ. հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, ֆունկցիոնալության խորը կամ ծանր սահմանափակմամբ (1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն) զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի**: ԶԻՆԱՊԱՀԸ ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից:

ԶԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)
- Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից
- ԶԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված եկամուտից

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ԶԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀ համայնքի հարգելի բարեկամներ,

Ամփոփելով 2024թ.՝ ձեզ եմ ներկայացնում ԶԻՆԱՊԱՀԻ տարեկան հաշվետվությունը մեծ երախտագիտությամբ և հպարտությամբ: Կյանքը և առողջությունը հանուն մեր հայրենիքի զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների ֆինանսական բարեկեցությունը և արժանապատիվ կյանքն ապահովելու մեր առաքելությունն ուղղորդել է մեզ 2024թ.: Մենք գրանցել ենք կարևոր ձեռքբերումների և զարգացման տարի:

Ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը շարունակում է մնալ անկայուն: Մեր զինծառայողները և նրանց ընտանիքները իրենց կյանքի և առողջության գնով են ապահովում կայունություն և անվտանգություն: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է հավատարիմ մնալ իր առաքելությանը: Մեծ երախտիքի զգացումով՝ շնորհակալություն եմ հայտնում ձեզ շարունակական աջակցության համար: Ձեր ներդրման շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է աջակցել մեր շահառուներին և իրականացնել ծրագրեր՝ ապահովելով ֆինանսական կայունություն և սոցիալական վերաինտեգրում:

2024թ. ընթացքում ԶԻՆԱՊԱՀԸ ֆինանսական հատուցումներ է տրամադրել 284 շահառուների՝ մեծամասամբ 2023թ. սեպտեմբերի Արցախի էսկալացիայի հետևանքով, և ընդամենը 5,482 դեպքերով: Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԻ եկամուտի շուրջ 45.4 միլիարդ ՀՀ դրամը ձևավորվել է պարտադիր վճարներից, 9.34 միլիարդը՝ ակտիվների կառավարումից և 171.3 միլիոնը՝ նվիրատվություններից: Այս միջոցները մեր հարգանքի և ազգային երախտագիտության վկայությունն են կյանքն ու առողջությունը մեր հայրենիքի համար զոհաբերած զինծառայողների հանդեպ:

Խոհեմ կառավարման և ռազմավարական պլանավորման միջոցով, որը զուգորդվում է սահմանային կայունության մեկ տարվա հետ, ԶԻՆԱՊԱՀԸ ապահովել է ֆինանսական կայունություն, որը մեզ հնարավորություն է տվել ընդլայնել մեր աջակցությունը և զինծառայողների և նրանց ընտանիքների համար սոցիալական ինտեգրման նախաձեռնություններ իրականացնել: Կառավարության, համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ մեր կառուցողական գործընկերությունը մեծ ազդեցություն է ունեցել համապարփակ աջակցության համակարգի ստեղծման գործում:

2024թ. հունվարին ԶԻՆԱՊԱՀԻ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ 26%-ով բարձրացվեցին մեր շահառուներին տրամադրվող ամսական հատուցման և լրացուցիչ վճարները: Այս բարեփոխման նպատակն էր մեղմել 2017թ. ի վեր գրանցված գնաճը՝ ի նշան հարգանքի և գնահատանքի մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին: Այս նախաձեռնությունը ավելացրեց ԶԻՆԱՊԱՀԻ տարեկան պարտավորությունները 4 միլիարդ ՀՀ դրամով՝ աջակցելով նրանց, ովքեր դրա կարիքն ունեն ամենաշատը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության արդյունքում իրականացրել ենք օրենսդրական փոփոխություններ՝ նպատակ ունենալով պահպանել ֆունկցիոնալության տարբեր աստիճանի սահմանափակումներ ունեցող զինհաշմանդամների ամսական հատուցման գումարները, անկախ ֆունկցիոնալության աստիճանի փոփոխությունից: Այս նախաձեռնությունը ֆինանսական և բարոյական մեծ աջակցություն էր շատերի համար: Միաժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ 2024թ. սեպտեմբերին իրականացրել ենք դրամական աջակցության ծրագիր ԶԻՆԱՊԱՀԻ այն շահառուների համար, ովքեր ունեն մանկուց հաշմանդամություն ունեցող երեխա: Շուրջ 60 ընտանիքներ ստանում են ամսական 50,000-ական ՀՀ դրամ աջակցություն:

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում ԶԻՆԱՊԱՀԻ թիմին, ում անմնացորդ նվիրվածությունն ու անխոնջ ջանքերը մեր հաջողության գրավականներն են: Նրանց աշխատանքի շնորհիվ մենք կարողանում ենք կյանքի կոչել ԶԻՆԱՊԱՀԻ խոստումը նրանց համար, ովքեր այդքան թանկ գին են վճարել մեր հայրենիքի համար:

Նայելով ապագային՝ մենք ոգեշնչված ենք մեր զինծառայողների և նրանց ընտանիքների տոկունությամբ և քաջությամբ: Մենք շարունակելու ենք ծառայել մեր շահառուներին և զարգացնել ԶԻՆԱՊԱՀԸ՝ դարձնելով այն մեր ազգի հերոսների աջակցության հենասյուն:

Շնորհակալություն ձեր վստահության և ԶԻՆԱՊԱՀԸ մեր ազգային հպարտության և

Խորին հարգանքով՝
Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ

ՁԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ.

ՁԻՆԱՊԱՀՆ ունի ճկուն ֆինանսական կառուցվածք: Հիմնական եկամուտների հոսքը ապահովում են կայուն աճող պարտադիր դրոշմանիշային վճարները և ակտիվների կառավարման եկամուտը: Ակտիվների կառավարումից ստացվող եկամուտը աճում է զգալի տեմպով՝ դառնալով հիմնական եկամտի աղբյուր, և հավանաբար հընթացս կդառնա ռազմավարական կարևոր բաղադրիչ:

Հատուցումները ձևավորում են ամենամեծ ծախսային հոդվածը՝ ուղղելով ՁԻՆԱՊԱՀԻ ռեսուրսների զգալի մասն իր առաքելության իրականացմանը: Չնայած վարչական և գործառնական ծախսերի աճին՝ դրանք մնում են վերահսկելի, իսկ կապիտալ ծախսերը զգալիորեն նվազում են:

Պարտադիր վճարները ձևավորում են ընդհանուր եկամուտի զգալի մասը և կայուն աճ են գրանցում՝ 2017-2019թթ. ընթացքում 21.78 միլիարդ ՀՀ դրամից հասնելով 45.39 միլիարդ ՀՀ դրամի 2024թ.: 2024թ. նախորդ տարվա համեմատ պարտադիր վճարներից ձևավորվող եկամուտը աճել է 5%-ով և կազմել 2024թ. ընդհանուր եկամտի 83%-ը, որը թեթևակի անկում է 2023թ. 87%-ի համեմատ, ինչը վկայում է եկամտի որոշակի դիվերսիֆիկացման մասին:

Նվիրատվությունները վերելք են գրանցել 2020թ.՝ հասնելով 6.98 միլիարդ ՀՀ դրամի, որից հետո զգալի անկում են գրանցել: 2024թ. նվիրատվությունները կազմում են 171 միլիոն ՀՀ դրամ՝ գրանցելով -37% անկում 2023թ. համեմատ: Նվիրատվություններից գոյացած եկամտի մասնաբաժինը չնչին է, ընդամենը՝ 0.31% 2024թ.: Մյուս կողմից, ակտիվների կառավարումից ստացված եկամուտը 57% աճ է գրանցել՝ կազմելով 9.34 միլիարդ ՀՀ դրամ 2024թ. նախորդ տարվա 5.94 միլիարդ ՀՀ դրամի համեմատ: Արդյունքում, 2024թ. ակտիվների կառավարումից ստացված եկամտի մասնաբաժինը ընդհանուր եկամտի մեջ կազմում է 17% 2023թ. 12%-ի համեմատ:

2024թ. ՁԻՆԱՊԱՀԸ գրանցել է եկամտի աճ 11%-ով նախորդ տարվա համեմատ, որը կազմում է 54.99 միլիարդ ՀՀ դրամ՝ ապահովելով աճի միտումը:

Հատուցումները կազմում են ընդհանուր ծախսերի զգալի մասը: 2024թ. հատուցումների ընդհանուր ծախսը աճել է 46%-ով նախորդ տարվա համեմատությամբ՝ կազմելով ընդհանուր ծախսերի 98%-ը: Վարչական ծախսերը աճել են 18%-ով 2024թ. նախորդ տարվա համեմատությամբ և կազմում են 316 միլիոն ՀՀ դրամ 2023թ. 267 միլիոն ՀՀ դրամի համեմատ և կազմում են ընդհանուր ծախսերի 1%-ը: Կապիտալ ծախսերը զգալիորեն նվազել են 2021թ. 105 միլիոն ՀՀ դրամի համեմատությամբ և կազմում են 16 միլիոն ՀՀ դրամ 2024թ., ինչը 65% անկում է նախորդ տարվա համեմատ, և կազմում են ընդհանուր ծախսերի 0.07%-ը՝ ազդարարելով ենթակառուցվածքներում և ակտիվներում ներդրումների կրճատման մասին:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017-2019	2020	2021	2022	2023	2024	2024թ. 2023-ի համեմատ	% հարաբ 2023	% հարաբ 2024
Եկամուտ պարտադիր վճարներից	21,779	9,134	29,072	35,274	43,199	45,393	5%	87%	83%
Նվիրատվություններ	305	6,976	1,290	508	273	171	-37%	1%	0.31%
Կամուրջ նվիրատվություն*	-	1,000	1,510	239	237	86	-64%	0.5%	0.2%
ՀՀԿԲ**	-	-	301	-	-	-	0%	0%	0%
Ակտիվների կառավարում	2,545	2,425	1,841	3,256	5,944	9,339	57%	12%	17%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	0.24	0.19	0.26	0.29	7.6%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**24,629**	**19,535**	**34,015**	**39,278**	**49,654**	**54,990**	**11%**	**100%**	**100%**
Հատուցումներ	1,635	8,030	44,484	16,878	14,747	21,489	46%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	246	267	316	18%	2%	1%
Կապիտալ ծախսեր	-		105	3	45	16	-65%	0.3%	0.07%
Գործառնական ծախսեր	0.32	-	149	21	25	39	53%	0.2%	0.2%
Այլ	-	-	-	-	-			0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,635**	**8,030**	**44,738**	**17,148**	**15,084**	**21,859**	**45%**	**100%**	**100%**

*Կամուրջ նվիրատվություն – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՁԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 48 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2024թթ.

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2024թթ. եկամուտը և ծախսերը արտացոլված են գրաֆիկում՝ ըստ տարիների:

2024թ. նախորդ տարվա համեմատությամբ ընդհանուր եկամուտն աճել է 11%՝ կազմելով 54,990 միլիոն ՀՀ դրամ: Ընդհանուր ծախսերը 2023թ. համեմատությամբ նույնպես աճել են 45%-ով՝ հիմնականում պայմանավորված հատուցման պարտավորությունների աճով՝ կազմելով 21,859 մլն ՀՀ դրամ 2023թ. 15,084 մլն ՀՀ դրամի համեմատ:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017 – 2024թթ. եկամուտը ծախսերի համեմատ, մլն ՀՀ դրամ



ՁԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. 4-ՐԴ ԵՌ

2024թ. ՁԻՆԱՊԱՀԻ եկամուտը նախորդ տարվա համեմատ աճել է 11%-ով, սակայն 2024թ. 4-րդ եռամսյակում իրական աճը 15% է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համար: Ընդհանուր ծախսերը 2024թ. աճել են 45%-ով: 2024թ. 4-րդ եռամսյակում դրանք արդեն աճել են 50%-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

2024թ. 4-րդ եռամսյակում պարտադիր վճարները աճել են 9%-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ և շարունակում են կազմել ընդհանուր եկամուտների ամենամեծ մասնաբաժինը՝ շուրջ 80%, որը 4 տոկոսային կետով նվազել է նախորդ տարվանից:

2024թ. նվիրատվությունները զգալիորեն նվազել են՝ 37%-ով նախորդ տարվա համեմատ: Ավելին՝ 2024թ. 4-րդ եռամսյակում նվիրատվությունները գրանցել են 46% նվազում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ ցուցաբերելով անկումային միտում: Ակտիվների կառավարումից ձևավորվող եկամուտը զգալի աճ է գրանցել՝ շուրջ 57% տարեկան և 50%՝ 2024թ. 4-րդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ակտիվների կառավարումից ձևավորված եկամուտը կազմում է ընդհանուր եկամտի 19%-ը 2024թ. 4-րդ եռամսյակում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 15%-ի համեմատ:

Ինչ վերաբերում է ծախսերին, ապա հատուցումները 2024թ. աճել են 45%-ով նախորդ տարվա համեմատությամբ և 50%-ով 2024թ. 4-րդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ կազմելով ընդհանուր ծախսերի 98%-ը 2024թ. 4-րդ եռամսյակի դրությամբ: Վարչական ծախսերը աճել են 18%-ով 2024թ. նախորդ տարվա համեմատությամբ, իսկ 2024թ. 4-րդ եռամսյակի դրությամբ գրանցել են 53% աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

ՄԼՆ, ԴՐԱՄ	ԵՌ 1 2024	ԵՌ2 2024	ԵՌ3 2024	ԵՌ4 2024	2024 ԵՌ1-4	2024-ը 2023-ի համեմատ	ԵՌ4'24 ԵՌ4 '23-ի համեմատ	% հարաբ ԵՌ4 2023	% հարաբ ԵՌ4 2024
(ԴՐԱՄ)									
Եկամուտ պարտադիր վճարներից	11,272	8,969	13,812	11,340	45,393	5%	9%	84%	80%
Նվիրատվություններ	88	27	23	34	171	-37%	-46%	1%	0%
Կամուրջ նվիրատվություն*	15	15	28	28	86	-64%	-57%	1%	0%
ՀՀԿԲ**	-	-	-	-	-	-	-	0%	0%
Ակտիվների կառավարում	2,019	2,182	2,389	2,750	9,339	57%	50%	15%	19%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0	1	0	0	8%	8%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**13,394**	**11,193**	**16,252**	**14,152**	**54,990**	**11%**	**15%**	**100%**	**100%**
Հատուցումներ	5,788	5,359	4,916	5,425	21,489	46%	52%	97%	98%
Վարչ. ծախսեր	60	83	74	100	316	18%	53%	2%	2%
Կապ. ծախսեր	1	5	1	9	16	-65%	-79%	1%	0%
Գործառնական ծախսեր	7	16	7	8	39	53%	144%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**5,856**	**5,463**	**4,997**	**5,541**	**21,859**	**45%**	**50%**	**100%**	**100%**

* Կամուրջ նվիրատվություն – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՁԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 48 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով՝ իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2024թ. համեմատությունը 2017-2024թթ. ամփոփ պատկերով

2017թ. մինչ 2024թ.-ը՝

- 2024թ. ստացվել է պարտադիր վճարների 25%-ը՝ գրանցելով 5% աճ նախորդ տարվա համեմատ
- Նվիրատվությունների միայն 2%-ն է կատարվել 2024թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 37%-ը ձևավորվել է 2024թ.
- Հատուցումների 20%-ը վճարվել է 2024թ.

ՄԼՆ,ԴՐԱՄ	2023	2024	2017-2024	% հարաբ 2024
Պարտադիր վճարներ	43,199	45,493	183,853	25%
Նվիրատվություններ	273	171	9,523	2%
Ակտիվների կառավարում	5,944	9,339	25,351	37%
Հատուցումներ	14,747	21,489	107,262	20%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2024թ.

- **2017-2024թթ.** ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,482** շահառուների:

- **2024թ.** գրանցվել են **284 նոր դեպքեր**, որոնցից 13-ը 2024թ. 4-րդ եռամսյակում՝ **2023թ. նույն ժամանակահատվածի 17 դեպքերի համեմատ**:

2024թ. 4-րդ եռամսյակի 13 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

2024թ. 4-րդ եռամսյակի ընդհանուր դեպքերի քանակ

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
9	1	0	3

2017-2024թթ. ընդհանուր դեպքերի քանակ

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
4,551	250	151	530

2017-2024ԹԹ. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,482 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին վճարված հատուցումները 2017-2024թթ.

2017-2024թթ. **5,482 դեպքերով հատուցումները** ստորև բաշխված են ըստ շահառուների դասակարգման:
43%-ը ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **30%**-ը զորահավաքային շարքայիններ և սպաներ, **19%**-ը պայմանագրային շարքայիններ և **8%**-ը կամավորներ:

2017-2024ԹԹ. ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,482 ԴԵՊՔՈՎ





2017-2024ԹԹ. 4-ՐԴ ԵՌ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

13

ՆՈՐ հատուցման դեպքեր 2024թ. 4-րդ եռամսյակում և 5,482 դեպքեր 2017-2024թթ.

5.5 մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2024թ. 4-րդ ԵՌ

107 մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2024թթ.՝ զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

5%

պարտադիր վճարների աճ 2024թ.՝ 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2024թթ.

2017-2024թթ. ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները կազմում են շուրջ 9.5 մլրդ ՀՀ դրամ: Նվիրատվությունների ընդհանուր թիվը կազմում է 94,3 հազար՝ միջին նվիրատվության գումարը՝ 101,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ:

2024թ. նվիրատվությունների գումարը համեմատած 2023թ. նույն ժամանակահատվածի հետ նվազել են -37%-ով: Նվիրատվությունների քանակը նվազել է -20%-ով, իսկ նվիրատվությունների միջին չափը նվազել է -22%-ով: Դա բացատրվում է հետպատերազմյան նվազումով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրատվությունները սովորաբար կտրուկ աճ են ունենում, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող սանկցիաներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև www.zinapah.am կայքի միջոցով:

2017-2024թթ. նվիրատվությունները ըստ արժույթի								
Փոխարժեք 000	**2017-2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**	**2024**	**2017-2024**	**2024-Ը 2023-Ի ՀԱՄԵՄԱՏ**
ՀՀ դրամ	296,495	4,380,043	739,093	301,333	173,750	87,650	5,978,278	-50%
Դոլար	7	4.826	879	492	233	191	6,628	-18%
Ռուբլի	162	114,908	6,517	455	1	2	122,045	123%
Եվրո	1	797	122	34	20	31	1,006	56%
2017-2024թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով								
	304,611	6,975,856	1,290,065	508,062	273,307	171,279	9,489,221	-37%
Նվիրատվությունների քանակ	2,807	41,769	25,976	12,665	5,209	4,167	94,322	-20%
Նվիրատվությունների միջին չափը	390	167	50	40	52	41	101	-22%

2017-2024թթ. նվիրատվությունները դրամով և քանակով



ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ
2024թ.

ԶԻՆԱՊԱՀԸ մասնակիորեն կամ ամբողջությամբ վերադարձնում է դրոշմանիշային պարտադիր վճարները ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված զինծառայողի ծնողին, ամուսնուն և (կամ) զավակին:
Դրոշմանիշային պարտադիր վճարների վերադարձն իրականացվում է համակարգի միջոցով, որը թույլ է տալիս ավտոմատ կերպով գրանցել և մշակել ներկայացված հայտերը ԶԻՆԱՊԱՀԻ կայքի միջոցով:

2024թ. կատարվել է դրոշմանիշային վճարների վերադարձ 6,676 դիմումների մասով, որը 4%-ով նվազ է 2023թ. համեմատ: Գումարային առումով վերադարձվել է 303 մլն ՀՀ դրամ, ինչը 10% ավելի պակաս է 2023թ. համեմատությամբ՝ պայմանավորված Արցախից ստացվող դիմումների քանակի անկումով:

Դրոշմանիշային վճարների վերադարձ 2024

	Զոհված	Զինծառայող	Ընդամենը
Վերադարձների քանակ զինծառայող.	1,907 29%	4,769 71%	6,676
Վերադարձների գումար մլն ՀՀ դրամ	82 27%	221 73%	303

2024 համեմատ 2023

	Զոհված	Զինծառայող	Ընդամենը
Վերադարձների քանակ	-26%	9%	-4%
Վերադարձների գումար	-41%	10%	-10%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ.

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է համագործակցությունը տարբեր հիմնադրամների, պետական ու ոչ պետական, բարեգործական կառույցների հետ՝ նպատակ ունենալով համախմբել կառույցներին զինծառայողներին և նրանց ընտանիքներին աջակցելու գաղափարի շուրջ և նպաստել շահառուների սոցիալական, ֆիզիկական ու հոգեբանական բարեկեցությանը: Արդյունքում ընդլայնվել է համագործակիցների շրջանակը, ստորագրվել են համագործակցության նոր հուշագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԻ թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման և սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ: Այդ նպատակով մշակվել է սոցիալական ծրագրերի հայեցակարգի նախագիծը, որի հիման վրա կազմվել է 2025թ. սոցիալական ծրագրերի պլանն ու առաջնահերթությունները: Տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ պետական և հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ՝ կրթական, տնտեսական ինտեգրման, բիզնեսի խթանման և այլ ոլորտներում համագործակցություն հիմնելու և պլանավորվող աշխատանքների/նախագծերի համակարգումն ապահովելու նպատակով:

Հետևողական լինելով այդ նպատակին, ԶԻՆԱՊԱՀԻ միջնորդությամբ և աջակցությամբ իրականցվել են մի շարք աջակցող, տեղեկատվական և ինտեգրմանը նպաստող գործառույթներ՝ միտված ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների բարեկեցությանը:

«Ակցես Թու Կէյր» հայ-ամերիկյան բարեգործական ատամնաբուժական կլինիկայի /Access To Care/ հետ համագործակցություն

ԶԻՆԱՊԱՀԻ հետ համագործակցությամբ «Ակցես Թու Կէյր» հայ-ամերիկյան բարեգործական ատամնաբուժական կլինիկան անվճար ատամնաբուժական և պրոթեզավորման ծառայություններ է մատուցել 30 շահառուների:

«Ակցես Թու Կէյր» հայ-ամերիկյան բարեգործական ատամնաբուժական կլինիկան մատուցում է անվճար ատամնաբուժական ծառայություններ ապրիլյան քառօրյա պատերազմում և 44-օրյա պատերազմում գերեվարված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամներին ու հաշմանդամ զինծառայողներին:

Համագործակցություն Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ համագործակցությամբ ԶԻՆԱՊԱՀԻ երեխա շահառուները հնարավորություն ստացան անվճար ընդգրկվելու Սյունիքի մարզի Կապան քաղաքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների նորաբաց կենտրոնում, որտեղ երեխաները կմասնակցեն բազմազան դասընթացների և հմտությունները զարգացնող վարժանքների:

Հայ բարեգործական ընդհանուր միություն /ՀԲԸՄ/ հետ համագործակցություն «Կին ձեռներեցներ» ծրագրի շրջանակներում

ՀԲԸՄ հետ համագործակցության շրջանակներում «Կին ձեռներեցներ» ծրագրին մասնակցելու հնարավորություն ստացան նաև ԶԻՆԱՊԱՀԻ շահառու կանայք՝ զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների մայրերը, կանայք ու դուստրերը: Ծրագիրը միտված է զարգացնելու շահառուների ձեռնարկատիրական գիտելիքներն ու հմտությունները, սովորեցնելու կատարել շուկայի գրագետ ուսումնասիրություն, մշակել շուկայավարման ռազմավարություն, կազմակերպել բիզնեսի և ֆինանսների կառավարումն ու հասկանալ մրցակցային առավելությունները, իսկ բարձր առաջադիմություն ունեցող մասնակիցները հնարավորություն են ստանում ներկայացնել իրենց բիզնես ծրագրերը և դիմել դրամաշնորհի: Համագործակցության արդյունքում շուրջ 34 կին շահառու դիմել է ծրագրին:

Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները հնարավորություն ստացան նաև մասնակցելու ՀԲԸՄ կողմից իրականացվող «Կարիերայի նոր հնարավորություններ և հեռանկարներ» խորագրով կարիերայի տոնավաճառին:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ.

ՀԱՅՈՐԴԻ բարեգործական հիմնադրամի հետ համագործակցություն «ՄԱՅՐԵՆԻՔ» ծրագրի շրջանակներում

Նոյեմբերի 17-ին կայացավ Հայորդի բարեգործական հիմնադրամի «Մայրենիք» ծրագրի մասնակիցների հետ ամփոփ հանդիպումը: Ծրագրին մասնակցում էին զոհված զինծառայողների կանայք, որոնց երեխաները լույս աշխարհ են եկել ամուսնու զոհվելուց հետո: Մայրիկները հրավիրված էին իրենց փոքրիկների հետ միասին: Հանդիպումն ավելի քան հուզիչ էր, սակայն ամեն բան արված էր միջոցառումը հետաքրքիր և թեթև դարձնելու համար: Փոքրիկները հնարավորություն ստացան զբաղվելու արթ թերապիաներով՝ նկարչություն, կավագործություն, ստացան նվերներ և «Էլլի նապաստակը» հեքիաթի գիրքը, որի համահեղինակն ու նախաձեռնողը ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներից է: Հանդիպման ընթացքում ներկայացվեց նաև ԶԻՆԱՊԱՀԻ առաքելությունը, մի քանի կարևոր նորություններ, մասնավորապես ինդեքսացիան, հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծրագիրը, ինչպես նաև անդրադարձ կատարվեց հաճախ տրվող հարցերին:

Շահառուների հետ հանդիպումներ

ԶԻՆԱՊԱՀԸ հաջողությամբ շարունակում է իրականացնել շահառուների հետ հանդիպումները ՀՀ մարզերում և Երևանում: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել երեք հանդիպում Կոտայքի, Շիրակի և Արարատի մարզերում: Ընդհանուր առմամբ հանդիպումներին մասնակցել է շուրջ 105 շահառու:

Հանդիպումները հանդիսանում են կարևոր հարթակ մեկ անգամ ևս ներկայացնելու ԶԻՆԱՊԱՀԻ առաքելությունը, ամրապնդելու այն շահառուների շրջանում և տեղեկացնելու շահառուներին նոր ծրագրերի և հնարավորությունների մասին:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ.

Կենտրոնական Բանկի հետ համագործակցություն

Կենտրոնական բանկը հանդես էր եկել ԶԻՆԱՊԱՀԻ շահառու երեխաների համար Ամանորյա միջոցառում կազմակերպելու նախաձեռնությամբ: Որոշ երեխաներ իրենց երազանքների և նվերների մասին նամակներ էին գրել Ձմեռ Պապին: Բոլոր երեխաները ստացան իրենց ցանկացած նվերները: Միջոցառումն անցկացվեց Կենտրոնական բանկում, որտեղ շահառուներին սպասում էր տոնական փոքրիկ համերգ, ներկայացում, էլֆերի և Ձմեռ Պապի մասնակցությամբ և հյուրասիրություն:

ՀԱՅՈՐԴԻ բարեգործական հիմնադրամի հետ համագործակցություն

Տոնական միջոցառումներ իրականացնելու նպատակով Հայորդի բարեգործական հիմնադրամն այս անգամ այցելեց Վարդենիս և Վայք: Այս անգամ թիրախավորվել էին զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների երեխաները, ովքեր հնարավորություն ստացան մասնակցելու Ամանորյա միջոցառմանը՝ լի նվերներով, խաղերով և անակնկալներով:

Հայորդի բարեգործական հիմնադրամի ԽՈԽԱ կենտրոնը, որն անվճար զարգացման կենտրոն է զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների 3-6 տարեկան երեխաների համար, իր Ամանորյա միջոցառումն իրականցրեց Երևան Փլեյսում: ԽՈԽԱ-ի բոլոր երեխաները Ձմեռ պապիկի կողմից ստացան իրենց նվերները: Միջոցառումը լի էր հեքիաթային անակնկալներով, ազգային երգերով, մանկական խաղերով, մուլտհերոսներով:

ԻԴՐԱՄ ընկերության հետ համագործակցություն

Իդրամ ընկերության հետ համագործակցությամբ ԶԻՆԱՊԱՀԻ շուրջ 600 երեխա իրենց մայրիկների հետ հնարավորություն ստացան անվճար դիտելու Ազգային տիկնիկային թատրոնում ընթացող «Ոչ մի Ամանոր Առանց Թեդիի» ներկայացումը:

ZINHUB

ZINHUB առցանց հարթակում գրանցված է 32 գործընկեր կազմակերպություն, որոնք իրականացնում են տարբեր անվճար ծրագրեր մեր շահառուների լայն շրջանակների համար: Հարթակում փուլային տեղադրվում են տարբեր դասընթացներ, աշխատանքի հայտարարություններ, հոգեբանական/բժշկական այլ ծառայություններ՝ դեղորայքի տրամադրման, պրոթեզավորման, ատամնաբուժական ծառայությունների, ինչպես նաև տարբեր խմբակների, ճամբարների մասին հայտարարություններ:

Անդրադառնալով աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ներկայացուցիչների հետ քննարկումներին և վերջնական դիրքորոշմանը՝ ԶԻՆՀԱԲ առցանց հարթակը ֆունկցիոնալ առումով համակցելու պետական e-work համակարգին, ԶԻՆԱՊԱՀԸ գործընկերների հետ կատարել է համակցման համար անհրաժեշտ լուծումների ուսումնասիրություն քննարկում: 2025թ. կիրականացվի ֆունկցիոնալ համակցումը, որը հնարավորություն կտա ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին ակտիվորեն ներգրավել առաջարկվող զբաղվածության հնարավորություններում:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով: 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվել է ԿԲ-ից՝ դառնալու անկախ իրավաբանական անձ իր սեփական ենթակառուցվածքով, սակայն օժտված պետական գործառույթներով:

ԹԻՄ

- Ղեկավար մարմին՝ Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով
- Գործառնական թիմ՝ 14 հոգուց բաղկացած անձնակազմ
- Կառուցվածքային փոփոխություն՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույցի հիմնական իրավասությունների և սոցիալական ծրագրերի վրա
- Անձնակազմի կատարողականի և գնահատման թվային Teamflect համակարգի իրագործում

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գնումների փոփոխված կարգի ընդունում
- ԶԻՆԱՊԱՀԻ վերաբրենդավորման արշավների մեկնարկ
- ԶԻՆՀԱԲ հարթակի ներդրում
- 2023թ. աուդիտի ավարտ և հրապարակում

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայությունների նոր գործընկերոջ ընտրություն 2024թ.
- Հաճախորդների զանգերի կենտրոն
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի և ենթակառուցվածքների մշակում
- Դրոշմանիշային վճարների վերադարձի գործընթացի ավտոմատացում և իրագործում
- Ֆինանսական ենթակառուցվածքի մշակում հատուցումների ծրագրի հենքով
- SS անվտանգության խոցելության գնահատում և ներթափանցման թեսթերի նախագծի իրականացում

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ օրենքի փոփոխություն՝ աջակցելու հաշմանդամության կարգավիճակի փոփոխությանը
- Սոցիալական ծրագրերի իրականացման կանոնակարգի մշակում
- Շահառուների՝ հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման ծրագիր

ԶԻՆԱՊԱՀԻ 2023թ. աուդիտն իրականացրել է **Գրանթ Թորնթոն ՓԲԸ**-ն, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ստորև ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ-ընթացիկ ակտիվներ			
Գույք և սարքավորում		94,691	126,849
Ոչ նյութական ակտիվներ		14,885	12,742
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	2,573,923	620,521
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	27,378,861	8,681,686
		30,062,360	9,441,798
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		28,617	7,459
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	42,579	1,215,099
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	44,710,738	32,674,544
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	5,519,741	2,389,638
		50,301,675	36,486,740
Ընդհանուր ակտիվներ		80,364,035	45,928,538
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	103,724,845	107,762,538
Վարձակալական պարտավորություններ		19,861	32,130
		103,744,706	107,794,668
Ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	13,101,671	13,314,038
Վարձակալական պարտավորություններ		23,561	27,415
Կրեդիտորական պարտքեր		14,948	14,536
		13,140,180	13,355,989
Զուտ ակտիվներ			
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով		(27,357)	(57,586)
չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը	8	(36,493,494)	(75,164,533)
(Կուտակված վնաս)/չբաշխված շահույթ		(36,520,851)	(75,222,119)
Ընդհանուր պարտավորություններ և զուտ ակտիվներ		80,364,035	45,928,538

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	43,709,476	36,021,512
Ֆինանսական եկամուտ	10	5,952,073	3,256,038
Այլ եկամուտ		697	188
		49,662,073	39,277,738
Ծախսեր			
Հատուցման ծախսեր		(3,436,956)	(12,983,465)
Աշխատակիցների նպաստներ		(132,110)	(118,480)
Մաշվածություն և ամորտիզացիա		(34,600)	(33,625)
Շահույթ/(վնաս) ակնկալվող վարկային կորուստների գծով			
պահուստի վերաչափումից	11	(228,394)	84,462
Ֆինանսական ծախսեր	12	(7,064,627)	(9,888,750)
Այլ ծախսեր		(94,772)	(83,551)
Զուտ վնաս փոխանակման տարբերություններից		252	(1,827)
		(10,991,207)	(23,025,237)
Տարվա արդյունք		38,671,039	16,252,502
Այլ համապարփակ եկամուտ			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս		32,521	(20,961)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(2,292)	(6,646)
Տարվա այլ համապարփակ վնաս		30,229	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		38,701,268	16,224,895

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**29,979**	**91,417,035**	**91,447,014**
Տարվա արդյունք	-	(16,252,502)	(16,252,502)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	(27,607)	-	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(27,607)	(16,252,502)	(16,224,895)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(57,586)**	**(75,164,533)**	**(75,222,119)**
Տարվա արդյունք	-	38,671,039	38,671,039
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	30,229	-	30,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	38,671,039	38,701,268
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(27,357)**	**(36,493,494)**	**(36,520,851)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամով	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	43,709,476	36,021,512
Տրամադրված հատուցումներ	(14,746,687)	(16,877,925)
Աշխատանքային ծախսեր	(99,729)	(82,302)
Այլ եկամուտ	340,809	56
Այլ ծախսեր	(513,676)	(147,024)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	28,690,193	18,914,317
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	-	
Հիմնական միջոցների ձեռքբերում	(59.908.431)	(2,530)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(1,997,423)	(25,975,000)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	30,000,000	-
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	1,267,377	4,370,000
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	4,944,405	1, 400,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	134,123	991,721
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	(25,559,949)	222,500
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագ.) զուտ դրամական միջոցներ		(18,993,309)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	3,130,244	(78,992)
Արտարժույթի ազդեցությունը կանխիկի վրա	(141)	(1,668)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	2,389,638	2,470,295
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	5,519,741	2,389,638

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ